ՕԾՈՓԻ ԵՎ ԿՈՒՔԻԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Միջնադարյան Հայաստանի Օձոփի Ս. Աստվածածին և Կուքիի Ս. Նշան կամ Հազարաբյուրաց նշանավոր վանքերը գտնվում են Սյունյաց աշխարհի պատմական Շահապոնք (Շահապունիք) գավառում (այժմյան Նախիջևանի ԻՍՍՀ Շահբուզի շրջան)։ Այս գավառը միջնադարում (XII—XVII դդ.) հեռու էր գտնվում բանուկ առևտրական ճանապարհներից։ Միակ գլխավոր ճանապարհը, որը նպաստավոր նշանակություն է ունեցել, դա Նախիջևան—Սյունիք մայրուղին է եղել։ Շահապունիքը պատմական, ճարտարապետական հուշարձաններով բավական հարուստ գավառ է։ Սակայն այժմ այդ վայրերում պատմա-ճարտարապետական հուշարձաններ քիչ են մնացել, որոնց գերակշռող մասն էլ կիսականգուն վիճակում է գտնվում։ Շահապունիքի հուշարձանների մեծ մասը ոչնչացվել է Լենկ-Թեմուրի և հետագա արշավանքների ընթացքում[1], ինչպես նաև XVII դարի սկզբներին։ Մեզ են հասել այդ գավառի մի շարք հուշարձաններ, ինչպիսիք են Կուքիի Ս. Նշան կամ Հազարաբյուրաց, Օձոփի Ս. Աստվածածին, Ագարակի Ս. Խաչ վանքերը, Նորսի Երեք խորանի, Քյոլբի Ս. Գրիգոր, Կժաձորի Ս. Գևորգ և այլ եկեղեցիները։

Ըստ վիմագրական և պատմական աղբյուրների Շահապունիք գավառը միջնադարում, որպես հայրենական տիրույթ, պատկանում էր Սյունյաց Պռոշյան իշխաններին[2]։ Գավառի հոգևոր կենտրոններից և ճարտարապետական հուշարձաններից շատերը հիմնարկված և հովանավորված են Սյունյաց աշխարհի իշխանների կողմից։

Հոդվածում ներկայացվող Օձոփի և Կուքիի վանքերը պատմագիտական, ճարտարապետական գրականության մեջ քիչ են հայտնի։ Այդ նշանավոր վանքերի պատմական անցյալին անդրադարձել և նրանց վիմական արձանագրություններից մի քանիսը վերծանել ու հրատարակել է Գ. Հովսեփյանը։ Նրանց մասին համառոտ տեղեկություններ են պահպանվել նաև Առաքել Դավրիժեցու, Ղ. Ալիշանի, Մ. Սմբատյանցի մոտ։ Օձոփի կամ Ածոփի Ս. Աստվածածին վանքը գտնվում է այժմյան Բադամլու գյուղի (պատմական Օձոփ, Ածոփ գյուղ) մոտ։ Օձոփ կամ Ածոփ անվանակոչմանը առաջին անգամ պատմական աղբյուրներում հանդիպում ենք XIII դարում, Ստ. Օրբելյանի մոտ։ Ըստ նրա Սյունյաց Ստեփանոս եպիսկոպոսը իր «կամարակապ» խաչը պահ է տվել «...առ եպիսկոպոս մի յԱծօպոյ վանս ի Շահապօնս՝ Պետրոս անուն»[3], որտեղ «յԱծօպոյ վանս»-ը խնդրո առարկա, այժմյան Բադամլու գյուղի Ս. Աստվածածին վանքն է։

Այնուհետև այս վանքում 1292 թ. գրված մի ավետարանի հիշատակարանը վկայում է. «...եւ գրեցաւ տառս Աստվածային ի գաւառիս Շահապունեաց, ի մենաստանիս, որ է մերձ յամենաւրհնեալ և յԱստուածապահ գեաւղս Ոծոպի կոչեցեալ, ընդ հովանեաւ սոսկալի և սխրագործ նշանացս, Խոտակերաց և խիկարաց... Զեռամբ յոգնամեղ և փցուն գրչաւորի Շմաւոնի»[4]։ Ինչպես երևում է գրչի հիշատակարանից, այս վանքը շինված է Ս. Աստվածածնի անունով։ Շմավոն գրիչը այդ նույն ավետարանի հիշատակարանի վերջում խնդրում է հիշել «...նաև զդասս եղբայրութեան այսմ անապատի, զառաջնորդ սորա և ըզփակակալ, զծերսն և զմանկունս և զմիաբանեալսն յայսմ քաւարանի»[5]։ Ինչպես տեսնում ենք, Օձոփի վանքը եղել է բազմամարդ, ունեցել է մեծ թվով միաբաններ։

XVII դարի պատմիչ Ա. Դավրիժեցին տալիս է վանքի հավաստի տեղադրությունը, ըստ որի «մերձ մայրաքաղաքին Նախչուանու կայ գաւառ մի, զոր անուանեն Շահբունուց ձոր, և յայսմ գաւառի կայ գիւղ մի՝ զոր անուանեն Օձօպի, և մերձ յայսմ գեղջս կա շինեալ ի վաղեմի ժամանակաց վանք մի յանուն սուրբ Աստուածածնին՝ զոր անուանեն Օձօպու վանք»[6]։ XVIII դարի կեսերին Օձոփ գյուղից Մկրտչի որդի Եղումի՝ վանքին վաճառած այգու գրավոր գործարքում գյուղի անունը նշվում է Օձոպ «...ի դուռն խոտգերան, Սուրբ Նշանի, ի ժամանակին Մարկոս վարդապետին»[7]։

Ալիշանը նշում է, որ Օձոփը «...ի սակաւ ակնարկութենէ յիշատակագրաց նշմարի՝ Երեւելի

---

1 Տե՛ս Տ. Սահակյան, Սյունիքը XIII դարում, Երևան, 1972, էջ 60—65։

2 Տե՛ս Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, մասն Ա, Վաղարշապատ, 1928, էջ 49—53։

3 «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն նահանգին Սիսական», Մոսկվա, 1861, էջ 258։

4 Մ. Սմբատյանց, Նկարագիր սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, Տփղիս, 1904, էջ 117։

5 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, մասն Բ, Երուսաղեմ, 1942, էջ 184։

6 «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ», Վաղարշապատ, 1896, էջ 427։

7 «Կալվածագրեր», պրակ 1, կազմեց՝ Հար. Աբրահամյան, Երևան, 1941, էջ 90։

վանք էին և աթոռ եպիսկոպոսի վիճակին»[8]։ Ալիշանը, ձեռքի տակ ունենալով մատենագիտական պատառիկներ, գտնում է, որ այդ վանքը եղել է եպիսկոպոսների նստավայր, որպես «աներկբայ իբրեւ թեմական եպիսկոպոս Օձոպոյ յամի 1307 յիշի Շմաւոն եպիսկոպոս ի ժողովին Սսոյ»[9]։



Նկ. 1. Օձոփի Ս. Աստվածածին վանքը։

Ս. Աստվածածին վանքը կառուցված է այժմյան գյուղից մոտ 600—700 մ հեռավորության վրա գտնվող մի բարձրադիր լեռնաբլուրի լանջին (նկ. 1)։ Գ. Հովսեփյանը, որը այցելել է Օձոփի վանքը, նրա մասին գրել է. «Բայց ներկա շենքը կառուցած է ԺԶ դարի երկրորդ կիսում. հարավային պատի ճակատին միայն պահված են արձանագրության մնացորդներով երեք քար, որ հետո են այնտեղ հաստատել կորստից փրկելու համար... աջ կողմի քարի վերա կարդացվում է. «(պատ)արագն տան մեր.../ր և թանկանն..../ կատարիչքն աւրհն/ին յայ.։ Ի թվ. Զ.. (կարող է մի տառ լինել) գրեցաւ». ուրեմն աւ առավելն ԺԸ դարի երկրորդ կիսի մի հիշատակարան»[10]։ Այս արձանագրությունը, դժբախտաբար, այժմ չի պահպանվել։

Ներկայումս Օձոփի Ս. Աստվածածին վանքի համակառույցից միակ կանգուն շինությունը նրա եկեղեցին է։ Այն կառուցված է սրբատաշ բազալտից, իսկ դրսի շարվածքում օգտագործված են կարմրա-սպիտակ հողմահարվող, սրբատաշ քարեր։ Շինությունն ունի քառամույթ գմբեթավոր բազիլիկայի հորինվածք (նկ. 2)։ Մուտքերը երկուսն են՝ արևմուտքից և հարավից։ Արևմտյան մուտքը ունի բոլորապատ կամարազարդ։ Բարավորին բանդակված է վեց տողանոց մի ընդարձակ արձանագրություն, որը հողմահարվող քարի վրա արձանագրված լինելու պատճառով քայքայվել է և դժվարընթեռնելի է դարձել։ Գեղեցիկ է տաճարի հարավային մուտքը, որի բարավորը զարդարված է քանդակներով և արձանագրություններով։ Գմբեթը բարձրանում է քառակուսի կտրվածքով չորս մույթերի վրա։ Թմբուկը կլոր է, հիմքից ոչ շատ բարձր ունի ութ լուսամուտ։ Աբսիդի երկու կողմերում գտնվում են երկու ուղղանկյուն ավանդատները։ Բեմի պատերին քանդակված են թռչուններ, կենաց ծառ, խաղողի ողկույզներ։

Զախակողմյան ավանդատան մուտքի վերևում տեղադրված են հինգ քանդակազարդ խաչքարեր, որոնցից երկուսը ունեն «ՌՃԻ» թվագրությունը կրող համառոտ արձանագրություններ։ Աջակողմյան ավանդատան պատի բարձունքում ագուցված են վեց խաչքար, մեկի վրա քանդակված է Գրիգոր Լուսավորչի ֆիգուրը, որը երկու ձեռքերը վերև բարձրացրած խաչեր է պահել։ Այդ խաչքարի ներքևի մասում նրա երկու կողմերում քանդակված է «ԳՐԻԳՈՐ»։

Օձոփի վանքի քանդակներից հետաքրքրական է հարավային պատի վրայի արագիլը, որը կտցահարում է օձին։ Տաճարի բազալտե մույթերից երեքն ունեն կենդանակերպ քանդակներ, որոնցից ուշագրավ է հյուսիս-արևմտյան մույթի հարթաքանդակը՝ առյուծը ամբողջ մարմնով դեպի ետ ձգված, թաթերի վրա հենված կտրում է իր վիզը ձգած պարանը։

Ս. Աստվածածնի գավիթը այժմ ավերակ է, միայն վանքի կենտրոնական մուտքի մոտ, երկու կողմերից պահպանվել են նրա պատերի և սյուների հետքերը։ Ըստ հատակագծի այն քառամույթ է եղել։ Վանքի արևելյան կողմում, նրա պարսպից 15—20 մ հեռավորության՝ վրա, յանջափեշին գտնվում է վանքի գերեզմանատունը, որն այժմյան վիճակով ունի ավելի քան 150 տապանաքարեր, խաչքարեր, որոնք վերաբերում են XIV—XVII դդ.։ Վանքի պարսպից ներս երևում են ուղղանկյուն հատակագծով շենքերի հետքեր։ Վանքի պարսպից դուրս, դեպի ձորը գտնվում է նրա աղբյուրը, որի վրա կառուցված շենքը կանգուն էր մինչև 1962 թ.։

Օձոփի Ս. Աստվածածին վանքը մեզ է հասել մի բանի անգամ վերանորոգվելուց հետո, որոնց մասին պահպանվել են կցկտուր վիմագրական և գրավոր տեղեկություններ։ Օձոփի վանքի արձանագրությունները ցույց են տալիս, որ եկեղեցու այժմյան շենքը կառուցված է 1651—1671 թթ.։ Վանքը վերանորոգվել է նաև հետագայում։ Ղազար կաթողիկոս Ծահկեցու կոնդակում նշված է. «...յոյժ յայտնի և հռչակաւոր վանք, որ շնորհօքն Քրիստոսի և անուամբ սրբոյ խաչին խոտակերաց կառուցեալ և հաս-

8 Ղ. Ա լ ի շ ա ն, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 483։

9 Նույն տեղում, էջ 484։

10 Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն, նշվ. աշխ., մասն Բ, էջ 183։

տատեալ կայ ի վերայ բարձրաբերձ. լերանց ի երկիրն Նախիջևանու ի գիւղ Ածոփ...»[11]։ Ըստ այս վկայության 1749 թ. վերանորոգվել է մասնավորապես վանքի տանիքը։



Նկ. 2. Օծոփի Ս. Աստվածածին վանքի հատակագիծը (չափագրությունը՝ Ա. Այվազյանի)։

Օծոփի Ս. Աստվածածին վանքը միջնադարում նաև գրչության կենտրոն է հանդիսացել։ Մեզ հասել են այդ վանքում ընդօրինակված բազմաթիվ ձեռագրերից միայն պատառիկներ։ Հայտնի են այդ վանքում գործած գրիչներ Շմավոնը (XIII դար), Աթանեսը (XV դար), ծերունի Սարգիսը (XVI դար) և այլք։ Աթանես գրչի ընդօրինակած ձեռագրերից մեզ են հասել երկու ավետարաններ, որոնցից մեկը նա գրչագրել է 1486 թ. «...ի սուրբ ուխտս Աւծոպոյ, ի դուռն

11 Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 436։

սուրբ Աստուածածնի»[12]. իսկ մյուսը՝ 1488 թ. «...ի գիւղն Օձոպ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի»[13]։

Առանձնակի ուշադրության է արժանի 1292 թ. գրված ավետարանը։ Գրիչ Շմավոնի հիշատակարանից հայտնի է դառնում, որ նա ավետա-



Նկ. 3. Օձոփի Ս. Աստվածածին վանքի մույթի թռիչքը։

րանը զարդարել է «ոսկւով և արծաթով, ոսկեգիծ դրուատով և ծաղկերանգ գովնով (S!) և պաճուճեցի ներքոյ և արտաքոյ, ընտրեալ քարամբք պատուականաւք և լուսափայլ մարգարտօք»[14]։

Օձոփի վանքի շինարարական կյանքի, պատմական անցյալի մասին տեղեկություններ են պարունակում նրա արձանագրությունները, որոնցից միայն երկուսն են հրատարակված։ Վանքի պահպանված արձանագրությունները վերաբերում են XVII դարին, նրանց մեծ մասն ընթեռնելի է։ Տուժել և քայքայվել է վանքի գլխավոր մուտքի բարավորի ընդարձակ արձանագրությունը, ինչպես նաև վանքի գերեզմանատան խաչքար-տապանաքարերի արձանագրությունները։ Վերծանության մեջ հավելումները կամ պակասող տառերի վերականգնումները վերցրել ենք քառակուսի փակագծերի մեջ։

Արձանագրություններ

Վանքի արևմտյան մուտքի կամարից 2 մ վերև տեղադրված են երեք խաչքարեր, որոնցից երկուսը ունեն մեկական արձանագրություն.

I.

1 Ս[ուր]բ խ[ա]չ[ս] յիշ[ատա]կ է Սհակին թՌՃ (1651), (նկ. 4, № 1 արձանագրություն)։

II.

1 Ս[ուր]բ խ[ա]չ[ս] յիշ[ատա]կ է 3

2 ոհաննէս եպիսկ[ո]պպս[ի], (նկ. 4, № 2 արձանագրություն)։

Գեղեցիկ է վանքի հարավային դուռը։ Բարավորից վերև՝ կամարի տակ տեղադրված ուղղանկյուն քարի մեջտեղում քանդակված է Մարիամ Աստվածածինը նորածին Հիսուսը գրկին։ Նույն քարի վրա, վերից վար, հստակ քանդակված է «թՌՃ» (1651)՝ քանդակման տարեթիվը։ Այս քանդակից ներքև, մեկ քարի վրա արձանագրված է՝

1 Կամաւն։ Ա[ստուծոյ] եւ։ օժանդակութ[եամ]բ

2 Յոհանէս եպ[իս]կ[ոպո]սի։ հրաշակ[եր]տե

3 ցо։ գեկ[ե]ղցիս. անուն։ ս[ուր]բ Ա[ստվա]ծածին (նկ. 4, № 3 արձանագրություն)։

Այս արձանագրությունից ներքև՝ մուտքի բարավորին, երեք քարի վրա քանդակված է չորս տողանոց արձանագրություն։ Երկրորդ քարը մի փոքրիկ խաչքար է, որի խաչի ներքևի մասում կա «ՌՃԻ» (1671 թ.)։ Ահա այդ արձանագրությունը՝

1 Ես տ[եր]։ Ղազար[իա]ս։ ի գե[ղ]ջէն։ Մարտիրոսէն շինել ետու բ թուման

2 իջ դուռս։ ս[ուրբ] Ա[ստվա]ծածնիս վանիս ծնողաց իմ[ոյ]ց պարոն

3 Աղաճանին։ եւ կենակցին։ Սիրամարքին եւ եղծն իմոց է

4 Ալիճանին կողակիցն։ Փարոնեի կողակիցին եւ իմո[ց] Մարիամին թվ. ՌՃԻ (1671), (նկ. 4, № 4 արձանագրություն)։

---

12 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի Հիշատակարաններ», մասն Գ, (1481—1500 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 90։

13 Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 151։

14 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., մասն Բ, էջ 184։



Նկ. 4. Օձոփի վանքի արձանագրությունները։

Վանքի ներսում, հյուսիսային պատի վրա կան դժվարընթեռնելի չորս արձանագրություններ, որոնք մթության պատճառով մեզ չհաջողվեց լուսանկարել։

I.

1 Խաչս յշատակ է Կուլաղների
2 կողակցն Նահապտին

II.

1 Ես Մարտիրոսեցի պարոն։ Լամլէմ ետու
2 բաժին։ Ժ. թուման։ հոգոյ հարբն
3 իմոց Մարտիրոսին։ որ ....։ Զ
4 գործն կատարեաց. եւ .... իմոց
5 մուրաան։ է։ թումա[ն] տվ[ա]ք ս[ուր]բ Ա[ստվա]ծած[ին]

III.

1 Խաչս [Հ]իշատակ է Լալին եւ կ
2 ողակցին Կուլիինեին
3 եւ որդոցն Ավգին Հախնաղ
4 արին Մարտենիսին ե եւ եղբարս իմ։ պարոն։ Էլիա
5 դին որ տվաք Դ. թուման ժա[մ] ս[ուր]բ եկ[ե]ղ[ե]ց[ի]ս

Այս արձանագրության կողքին տեղադրված է բազալտե քար, որն ունի «ԹՎ. ՌՃԻԲ» (1671) արձանագրությունը։

Մի փոքրիկ խաչքարի վրա՝

IV.

1 Խ[ա]չս յշատակ է
2 Կուլաղինեի կ
3 ողակցն Նահապտին

Զախակողմյան ավանդատան պատին ագուցված խաչքարի վրա՝

1 Խաչս։ բարեխօս է Ղազար եղբ[որ]ն եւ .... իմօց Նիրսեսին
2 թվ ՌՃԻ (1671)

Գմբեթի թմբուկի վրա՝

1 Շինեց[ա]։ ս[ուր]բ կ[աթո]ղկէս
2 Տիկէցի Մալխ[ա]սի որդի Մարքարէս թվ ՌՃԾ (1701), (նկ. 4, № 5 արձանագրություն)։

Այս արձանագրությունը վերծանել է նաև Գ. Հովսեփյանը՝ «Շինեցւ. սբ. կթկէս./Տիկեցի Մալխասի որդի Մարքարէս թվ. ՌՃԾԴ»[15]։

Այստեղ Գարեգին Հովսեփյանը թվագրության կողքին կարդացել է նաև Դ տառը և 1701 թ. փոխարեն ստացել է 1705 թ.։ Եկեղեցու գմբեթի պատուհաններից մեկի կամարակապ քարի վրա արձանագրված է «Մարտիրոս», որը, ամենայն հավանականությամբ, եկեղեցին կառուցող քարգործ վարպետի անունն է։

Պատմական Կուքի (Կանքի) գյուղը ներկայիս Շահբուզի շրջանի Քյուքի գյուղն է։ Այն գտնվում է Կուքի վտակի աջ կողմում, համանուն լեռան փեշին։ Կուքի գյուղի անվանը առաջին անգամ պատմական աղբյուրներում հանդիպում ենք Ստ. Օրբելյանի մոտ[16]։ Կուքին Շահապունիք գավառի հնագույն գյուղերից մեկն է։ Նրա շրջակայքում կան նախնադարյան բնակավայրերի, դամբարանների հետքեր։ Պատմական Կուքին եղել է բավական մեծ գյուղ։ Վանքում գրված ձեռագրերից մեկի հիշատակարանը վկայում է, որ «Ը թվաբերումես. հայոց ի ՋԻ. թուականին գրեցաւ գիրքս սոսկացուցիչ ի ձորս Շհապունեաց ի գեւղս որ կոչի Կուքի, ընդ հովանեաւ սբ. Հաղարաբիւրացս եւ Կաթուղիկէիցս սբ. Աստծնի. եւ սբ. Ստեփանոսի եւ գեղամիջի սբ. Գրգրիս. եւ սբ. Նշանիս, եւ այլ միաւամուռ Վարդանաց սբ. Նահատակցս...»[17]։ Ըստ այս հիշատակարանի Կուքին ունեցել է Ս. Նշան վանքը, Ս. Հազարաբյուրաց, Ս. Գրիգոր, Ս. Ստեփանոս, Ս. Աստվածածին, Ս. Վարդան եկեղեցիները։ Ընդ որում «գեղամիջի սբ. Գրգրիս»-ը վկայում է, որ այդ եկեղեցուց բացի մյուսները կառուցված են եղել գյուղից դուրս, նրա շրջակայքում։ Ս. Գրիգոր եկեղեցու ավերակ հիմքերի վրա XX դարի սկզբներին կառուցել են մզկիթ։ Մյուս եկեղեցիների հիմքերը այժմ հազիվ են երևում, կիսականգուն վիճակով է մնացել միայն Ս. Նշան վանքը (նկ. 5)։

Ս. Նշան կամ Հազարաբյուրաց (շրջակայքի հայ բնակչության կողմից այն անվանվում է Կուքիի Հազարափրկիչ) վանքը կառուցված է այժմյան գյուղից մոտավորապես 800 մ դեպի հյուսիս գտնվող գեղեցիկ բարձրավանդակի վրա։ Ինչպես Օձոփի վանքի, այնպես էլ Ս. Նշանի մասին մասնագիտական գրականությունում տեղեկությունները սակավ են։ Այս վանքին անդրադարձել են Գ. Հովսեփյանը և Մ. Սմբատ-

15 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., մասն Բ, էջ 186։

16 Տե՛ս Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 378—379։

17 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, մասն Գ, Նյու-Յորք, 1942/43, էջ 148։

յանցը։ Ըստ Մ. Սմբատյանցի, Կուքիի Ս. Նշան վանքը հիմնվել է «ի Պապաքայ որդւոյ Պռոշ իշխանի, վերակացութեամբ Հովհաննես վարդապետին յամի 1287»։ Մ. Սմբատյանցը դրա համար հիմք է ունեցել Պապաք իշխանի (հավանաբար Պռոշ իշխանի ավագ որդու) թողած մի



Նկ. 5. Կուքիի Ս. Ն-ան վանքը։

խաչքարի արձանագրությունը, որը կանգնեցված է եղել վանքի արևելյան կողմում և ունեցել է արձանագրություն. «Ի թվիս ՉԼԶ. ԵՍ Պապ/աք կանկնեցի ի կեն(դանութիւն—եղծված է) ամուսին իմոյ...»[18]։ Այս արձանագրությունը չի պահպանվել։

Գ. Հովսեփյանը, որը եղել է Կուքիի Ս. Նշան վանքում, թողել է վանքի համառոտ նկարագրությունը. «Բուն եկեղեցին փոքր է, չորս անմիջապես իրար կապած խորաններով (ափսիդ). ունի և գավիթ. թաղակապ, սրահաձև երեք կամարներով (դալան). գավիթն ավելի ընդարձակ է, քան բուն եկեղեցին, ինչպես Հավուց թառում Աստվածատուր կաթուղիկոսի շինածը, և հավանորեն նույն շրջանի կամ քիչ ավելի վաղ, բայց ոչ քան 1496 թիվը»[19]։ Հովսեփյանը իր ուսումնասիրությունների ժամանակ գյուղի Ջրաղացի ձոր անվանվող վայրից, որը վանքին մոտ է, գտել է ավելի վաղ թվագրություն ունեցող արձանագրություն՝ «Թվ. ՈԿԴ (1215) Զարդեղ կանգնեցի...»[20]։ Ինչպես Գ. Հովսեփյանն է նշում, այդ արձանագրությունը ցույց է տալիս, որ Կուքիում շինարարական աշխատանքները սկսվել են դեռևս Վասակ Խաղբակյանի իշխանության ժամանակաշրջանից և նույնիսկ ավելի վաղ։

Կուքիի Ս. Նշան կամ Հազարաբյուրաց վանքը այժմ կիսավեր է. սրբատաշ երեսաքարերը, ծածկի սալերն ու քիվերը թափվել են, քանդված են ծածկի թաղերը, կամարները, փլվել են ավագ խորանի երկու կողմերում գտնվող ավանդատների ծածկերը։ Քանդված է նաև գավթի ծածկը, մնացած կամարները խարխուլ են, փլման ենթակա։

Կուքիի Ս. Նշան վանքի եկեղեցին փոքր, եռաբսիդ գմբեթավոր հուշարձան է, արտաքուստ քառանկյունի, իսկ ներքուստ խաչաձև հատակագծով (նկ. 6)։ Միակ դուռը բացվում է գավթի մեջ, ունի չորս ավանդատուն։ Զախակողմյան ավանդատան մուտքի պատին, գետնից վերև երկրորդ շարքում, երկու քարի վրա փորագրված է արձանագրություն, որը վերաբերում է XIII դարին։ Այսօր այդ արձանագրության որոշ տառերը եղծված են։ Արձանագրությունը ժամանակին վերծանել է Գ. Հովսեփյանը։

«Կամաւն այ ես Վրթ և ամուսին Աղ/ուտ տվաք։ Ճ։ դեկ ի Ռ։ բիւրքս (Հազարաբիւրքս) /միաբանքս խոստացան ի տարին։ Ռ։ /ժամ, կատարիչ Տ! ահնին յայ / թվ. ՉԽ.»[21]։

Ս. Նշան եկեղեցու արևմտյան կողմից կից է գավիթը, որը ներքուստ անսյուն է, թաղակապ ծածկը հենված է եղել որմնամույթերի միջև ընկած կամարների վրա։ Որմնասյուների վրա քանդակված են գեղեցիկ կիսաշրջանաձև պսակներ, նույն քանդակներով են զարդարված նաև վանքի ավանդատների խորշերը։

Գավիթն ունի մեկ մուտք, որի բազալտե բարավորի վրա քանդակված են խաչեր։ Գավթի որմնամույթերից մեկի շարվածքում ագուցված է մի խաչքար, որն ունի «յշ ՊՂԸ» (1449 թ.) արձանագրությունը։

Կուքիի Ս. Նշան վանքն իր հատակագծով և ճարտարապետական լուծումներով տարբերվում է ինչպես Շահապունիքի, այնպես էլ Նախիջևանի մյուս գավառների հուշարձաններից։

Եկեղեցուց արևմուտք գտնվում է թաղակապ, ձգված շենք, որը հավանաբար վանքի գրատունն է։ Ծածկում կա երեք կլոր լայն բացվածք՝ լուսավորության համար։ Շենքը արձանագրություններ չունի։ Հավանաբար, այն կառուցվել է եկեղեցու հետ միասին XIII դարում։

Վանքի արևմտյան կողմում կառուցված են եղել խցերը։ Նման շինությունների հետքեր են նկատվում նաև հյուսիսային և հարավային կողմերում։ Վանքի և նրա համակառույցի մեջ մտնող շինությունների, գերեզմանատան տարածությունը գրավում է ավելի քան 700 քմ տարածություն։ Վանքի շինությունները առնված են եղել քառանկյունի պարսպի մեջ, որը ունեցել է երկու դարպաս։ Ավերակ պարսպապատի մոտ գտնվում է վանքի աղբյուրի շենքը՝ 2,30×3,20 մ չափով։ Պարսպից դուրս, վանքի հյուսիս-

18 Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 485։

19 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., մասն Ա, էջ 60։

20 Նույն տեղում։

21 Նույն տեղում։

արևմտյան կողմում վանքի գերեզմանատունն է, որը այժմ ունի մոտ քսան տապանաքար XIII—XVII դդ. պատկանող։ Գ. Հովսեփյանը վերծանել է այդ խաչքար-տապանաքարերից մեկի արձանագրությունը 1296 թվագրումով[22]։

Ս. Նշան վանքը միաժամանակ հանդիսացել է Շահապունիք գավառի մշակութային կյանքի կենտրոն։ Այս վանքում գրվել են բազմաթիվ ձեռագրեր, որոնց չնչին մասն է մեզ հասել միայն։ Այստեղ իրականացվել և մեզ են հասել Լամբրոնացու պատարագի մեկնության երկու ընդօրինակումները, որոնցից մեկը գրվել է 1276 թ.[23], իսկ երկրորդը՝ 1322 թ.[24], Մարկոս կրոնավոր գրչի կողմից։ XIV դարի կեսերին Դանիել Կուքեցին Մարգարե վարդապետ Օձոփեցու համար արտագրել է Հ. Քոնեցու «Գիրք դժոխոցը»[25], 1409 թ. գրչագրվել է «Գիրք Ստորոգութեանց Արիստոտելին», 1461 թ.՝ մի Պատարագամատույց, գրիչ Հովսեփ եպիսկոպոսի կողմից[26] և այլն։

Կուքիի վանքում, նրա գրատանը տասնյակ ձեռագրեր է բազմացրել և ծաղկել Մանուել գծողը։ Գրչարվեստի արժեքավոր ձեռագիր է 1471 թ. նրա ընդօրինակած և ծաղկած Հայսմավուրքը։ Մյուս ձեռագիրը՝ Գանձարանը, ընդօրինակված է 1478 թ., Մաշտոցը՝ 1493 թ., Ավետարանը՝ 1495 թ., Ավետարան՝ արտագրված Գոգալ և Խոնծին ամուսինների խնդրանքով՝ 1496 թ. և այլ ձեռագրեր[27]։ Մանուել գրիչը 1478 թ. ընդօրինակած Գանձարանի (բոլորգիր) հիշատակարանում գրել է. «Գրեցաւ սուրբ Գանձարանս յոգնամեղ և մատնագէտ և գրիչ Մանուէլի եղկելի և սուտանուն քահանայի...»[28]։ Հավանական է, որ Մանուելը XV դարում ապրելով և գործելով Կուքիի վանքում, նրա դպրատանը ուսուցանել է գրչարվեստ, եղել է հմուտ և դիտակ մատենագիր, ծաղկող և գծող։ Այդ են



Նկ. 6. Կուքիի Ս. Նշան վանքի հատակագիծը (չափագրությունը՝ Ա. Ավագյանի)։



Նկ. 7. Կուրիի Ս. Նշան վանքի գավթի որմնամույթը։

22 Տե՛ս նույն տեղում, էջ 61։

23 Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 140։

24 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., մասն Ա, էջ 60։

25 Նույն տեղում, մասն Բ, էջ 178։

26 Նույն տեղում, էջ 179։

27 Նույն տեղում, էջ 179—180։

28 «Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաբյան, Երևան, 1965, հատ. Ա, էջ 1213, ձեռ. № 4433, գրչի հիշատ., էջ 2ա, 71բ, 78բ, 79ա։

ապացուցում նաև նրա ընդօրինակած ձեռագրերը։ Կուքիի վանքի գրիչներից հայտնի են նաև Հովսեփ կրոնավորը (XV դար), Հակոբ գրիչը, Դանիել գրիչ Կուքեցին XV դար) և ուրիշներ։

Վայոց ձորի Խաչիկ գյուղի մոտ վիմագրական մի արձանագրություն վկայում է «Կուքեցի ուստայ Յովհաննէս նկարաքար»[29]։ Ըստ երևույթին Հովհաննես նկարաքարը քանդակագործական աշխատանքներ է կատարել նաև հայրենի գյուղում։ Վերջին գրավոր տեղեկությունները Կուքիի վանքի մասին վկայում են, որ, կուքեցի Սարգսի որդի Առաքել վարդապետը 1735 թ. մի խաչ է նվիրում իր հայրենի գյուղի վանքին[30]։

Պատմական Կուքի գյուղի հայկական ազգաբնակչությունը մոտավորապես 1755—1760 թթ. գաղթել է այդտեղից և բնակություն հաստատել Վրաստանի նախկին Կումիսու գավառի Ծինծղարո գյուղում, որտեղից հետագայում տեղափոխվել են Թբիլիսի։

Ա. ԱՅՎԱԶՅԱՆ

ՈՒՇ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ ԷՋՄԻԱԾՆԻ ՇՐՋԱՆԻ ԱՅԳԵՇԱՏ ԳՅՈՒՂՈՒՄ

1971 թ. էջմիածնի շրջանի Այգեշատ գյուղից հյուսիս գտնվող բլուրների քարքարոտ լանջերը մշակովի դարձնելու նպատակով կատարված աշխատանքների ժամանակ հայտնաբերվել էին խեցանոթների բեկորներ։ Մեր կողմից տեղանքի մանրակնին հետազոտությամբ պարզվեց, որ նոր յուրացվող հողատարածությունն իր մեջ է առնելու այդտեղ գտնվող նախնադարյան դամբարանադաշտի մի հատվածը։ Ոչնչացման ենթակա հուշարձանները հետազոտելու, նրանց ժամանակագրական պատկանելությունը որոշելու նպատակով, 1971 թ. օգոստոս ամսին էջմիածնի գավառագիտական թանգարանի միջոցներով ուսումնասիրության ենթարկվեցին յուրացվող տարածքի վրա գտնվող շուրջ 20 դամբարաններ, որոնք պատկանում էին Հայաստանի նախնադարյան մշակույթի ամենատարբեր փուլերին (մ. թ. ա. III—I հազ.)։ Հետազոտությունների ընթացքում հայտնաբերվեցին նաև Հայաստանի ուշ հելլենիստական դարաշրջանի թաղումներ, որոնք էլ նյութ են դարձել ներկա հետազոտության։

№ 1 դամբարան.—Գտնվում էր Այգեշատի այգիների մոտ, գյուղի այժմյան գերեզմանոցից 800—900 մ հյուսիս-արևմուտք, քարքարոտ բլուրներից մեկի հարավային լանջին։ Գետնի մակերեսին այն ներկայանում էր որպես սովորական կրոմլեխ, որի շրջանաձև եզրագիծը սահմանագծվում էր միջին մեծության, իրար մոտ շարված որձաքարերով (տրամագիծը՝ 7 մ)։

Կրոմլեխի մակերեսին լցված էին մանր քարեր, որոնցով կազմված թմբի բարձրությունը շրջանագծի կենտրոնական մասում 40—50 սմ էր (նկ. I, 1, 2)։ Կրոմլեխի կենտրոնում, քարակույտի տակ հայտնաբերվեցին դամբարանի երեսը ծածկող երեք սալ քարեր (1,2×0,5×0,2 չափերի), որոնք դրված էին իրար շատ մոտ, արևելք-արևմուտք ուղղությամբ։ Ծածկի քարերի արանքները լցված էին մանր քարաբեկորներ, ըստ երևույթին եղել է նաև հող, որը հողմնահարության հետևանքով մարրվել էր։ Սալ քարերը ծածկում էին փոքրիկ դամբարանը, որի երեք պատերը կառուցված էին կողքի վրա դրված մեծ քարերից, իսկ մեկը՝ հյուսիսայինը, մանր քարերից։ Ուղղանկյուն ձև ունեցող դամբարանը հյուսիս-հարավ առանցքով ուներ 1,4 մ երկարություն, 0,9 մ լայնություն և 0,8 մ խորություն։ Հատակը շարված էր մանր քարերով, որոնք ամրացված էին կավաշաղախով (նկ. I, 3)։

Դամբարանի ներսում՝ հարավ-արևելյան անկյունում հայտնաբերվեցին երկաթից պատրաստված եռաթև նետասլաքներ, գոտու քառանկյունաձև ճարմանդ, արծաթե հայելու բեկորներ, կարմիր քարով ոսկե օղ և սափորիկի բեկորներ։ Ննջեցյալի գանգի շատ վատ պահպանված մնացորդներ հայտնաբերվեցին դամբարանի հյուսիսային հատվածում։ Կմախքի մնացած բեկորները, որոնք նույնպես շատ վատ էին պահպանվել, հնարավորություն չընձեռեցին որոշելու ննջեցյալի թաղման սկզբնական դիրքը։ Ելնելով դամբարանի չափերից և ոսկորների սփռվածությունից, կարելի է ասել, որ ննջեցյալը թաղվել է հավանաբար ոտքերը կծկած վիճակում։

№ 2 դամբարան.— Գտնվում է առաջինից 30 մ արևմուտք։ Իր արտաքին նշաններով և դամբարանի կառուցման ձևով հար և նման է

29 «Դիվան հայ վիմագրության», պրակ III, կազմեց Ս. Բարխուդարյան, էջ 183։

1 Այգեշատ գյուղի մոտ գտնվող նախնադարյան հուշարձանների առաջին նկարագրությունը տվել են ճարտարապետ Թ. Թորամանյանը և Մ. Վ. Նիկոլսկին։

30 Տե՛ս Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., մասն Բ, էջ 182—183։